ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

"17" մարտի 2023թ. N 462-Ա

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԴՐՈՂՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության տարածքից ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների և ուղեբեռների միջպետական փոխադրումների իրականացման կարգը հաստատելու մասին» N 1587-Ն որոշմամբ հաստատված պահանջներով և հիմք ընդունելով գնահատման թերթիկները՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության տարածքից միջպետական ավտոբուսային կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող Հայաստանի Հանրապետության փոխադրողների ընտրության 2023 թվականի մարտի 10-ին կայացած մրցույթի արդյունքները՝ ըստ գնահատման ամփոփ թերթիկի՝ համաձայն հավելվածի:

2. «Երևան-Մոսկվա» միջպետական երթուղու սպասարկման համար 50,8 ընդհանուր միավորով, որպես հայկական փոխադրող, հաղթող ճանաչել «Բասլենդ» ՍՊ ընկերությանը՝ «Նեոպլան» մակնիշի 707 AA 03, 892 LV 61, 707 QQ 03, 707 XX 03, «Մերսեդես-Բենց» մակնիշի 707 CG 03 և «Սետրա» մակնիշի 707 OO 03 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցներով՝ սահմանելով սպասարկման երեք տարի ժամկետ, մեկ ուղևորի համար 35000 դրամ փոխադրավարձով:

3. «Երևան-Կրասնոդար» միջպետական երթուղու սպասարկման համար 50,6 ընդհանուր միավորով, որպես հայկական փոխադրող, հաղթող ճանաչել «Պեգաս-Տրանս» ՍՊ ընկերությանը՝ «Ման» մակնիշի 015 TL 01, 015 LT 01 և «Մերսեդես-Բենց» մակնիշի 108 RR 01 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցներով՝ սահմանելով սպասարկման երեք տարի ժամկետ, մեկ ուղևորի համար 20000 դրամ փոխադրավարձով:

4. «Երևան-Բագրատաշեն-Թբիլիսի» միջպետական երթուղու սպասարկման համար 68,5 ընդհանուր միավորով, որպես հայկական փոխադրող, հաղթող ճանաչել «Երկու Ընկեր» ՍՊ ընկերությանը՝ «Մերսեդես-Բենց» մակնիշի 553 QQ 55, 553 HH 55, 553 CC 55 և 553 ZZ 55 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցներով՝ սահմանելով սպասարկման երեք տարի ժամկետ, մեկ ուղևորի համար 6500 դրամ փոխադրավարձով:

5. «Երևան-Անապա» միջպետական երթուղու սպասարկման համար 57,7 ընդհանուր միավորով, որպես հայկական փոխադրող, հաղթող ճանաչել «Լյուքս Վոյաժ» ՍՊ ընկերությանը՝ «Մերսեդես-Բենց» մակնիշի 855 AA 85, 855 VV 85 և 855 TT 85 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցներով՝ սահմանելով սպասարկման երեք տարի ժամկետ, մեկ ուղևորի համար 20000 դրամ փոխադրավարձով:

6. «Երևան-Եկատերինբուրգ», «Երևան-Թեհրան», «Երևան-Դոնի Ռոստով», «Երևան-Սանկտ-Պետերբուրգ», «Երևան-Մոսկվա», միջպետական երթուղիների սպասարկման համար հայտեր ներկայացրած «Տաթև SSS», «Պեգաս-Տրանս», «Ֆորսաժ Ավիա», «Ինտեր Տուր», ՍՊ ընկերությունները հաղթող չեն ճանաչվել, քանի որ նրանց կողմից ներկայացված տրանսպորտային միջոցները հանվել են մրցույթից՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության տարածքից ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների և ուղեբեռների միջպետական փոխադրումների իրականացման կարգը հաստատելու մասին» N 1587-Ն որոշմամբ հաստատված կարգի 30-րդ կետի պահանջի:

7. «Երևան-Եկատերինբուրգ», «Երևան-Մոսկվա» միջպետական երթուղիների սպասարկման համար հայտեր ներկայացրած «Ֆորսաժ Ավիա», «Ալբերտ Տրանս Տուր» ՍՊ ընկերությունները Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության տարածքից ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների և ուղեբեռների միջպետական փոխադրումների իրականացման կարգը հաստատելու մասին» N 1587-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի պահանջների համապատասխան զրկվել են երթուղու սպասարկման իրավունքի մրցակցությունից:

8. «Երևան-Բավրա-Նինոցմինդա», «Երևան-Կալուգա», «Երևան-Սարատով», «Երևան-Սարատով-Սամարա-Կազան», «Երևան-Նիժնի Նովգորոդ», «Երևան-Սոչի», «Երևան-Մինիրալնիե Վոդի», «Երևան-Օրենբուրգ», «Երևան-Սամարա» միջպետական երթուղիների սպասարկման համար հայտեր չեն ներկայացվել, հետևաբար երթուղիների մրցույթները համարել չկայացած:

9. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Արմեն Սիմոնյանին:

3/17/2023

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: SANOSYAN GNEL 1710830069 **Գ. ՍԱՆՈՍՅԱՆ**

ք. Երևան

Ձև № 7

Հավելված

ՀՀ տարածքային կառավարման և

ենթակառուցվածքների նախարարի

<< >> _____ 2023թ.

N _____ հրամանի

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓ-ԹԵՐԹԻԿ

10 մարտի 2023թ.
(մրցույթի անցկացման օրը)

Կազմակերպության անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը	*Գումարային գնահատականը*			
	ներկայացված ավտոբուսների	վարորդների աշխատանքային փորձի	խախտումների առկայության	ընդամենը
<< Բասլենդ >> ՍՊԸ	*<< Երևան - Մոսկվա >>*			
	35,3	7,5	8	50,8
<< Պեգաս-Տրանս >> ՍՊԸ	*<< Երևան - Կրասնոդար >>*			
	22,3	8,3	20	50,6
<< Ֆորսաժ Ավիա >> ՍՊԸ	*<< Երևան - Եկատերինբուրգ >>*			
	24,3	4	8	36,3
<< Այբերտ Տրանս Տուր >> ՍՊԸ	*<< Երևան - Մոսկվա >>*			
	24,7	6	8	38,7
<< Երկու ընկեր >> ՍՊԸ	*<< Երևան-Բագրատաշեն-Թբիլիսի >>*			
	39,5	9	20	68,5
<< Լյուքս Վոյաժ >> ՍՊԸ	*<< Երևան-Անապա >>*			
	31	6,7	20	57,7

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ _____ Խաչիկ Սողոմոնյան
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)